

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարեկանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Օտար քաղաքացիք գինում են ուղղակի
Тифлис. Редакция „Маск“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են տօն և լեզուով
Յայտարարութիւնները կամար վճարում են
Խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄԱՍԿ“

ԻՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ԲՈՂԱՔԱՎԱՆ ԼՐԱՒԻՐ

1878

Թիֆ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ ԵՒ ԼՐԱՆՆ ՕՐ, բացի տօն և տօներէն հետեւեալ օրերէն:

Լրագրի գինը և պրօպրանման նոյն են մնում: Մենք ստանում ենք ՍԵՓԵՄԵՐՆԵՐ: ՄԵՇԿԻՒՄ տարեկան գինը 10 ռուբլ է, կես տարեկանը 6 ռուբլ: Գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՍՏՆ մէջ:

ԼՐԱՆՆԶԻՒՆ ՀԱՄԱՐՆԵՐԻՐ ծախվում են 5 կոպէկով հատր: Օտար քաղաքներէն պէտք է գրիմել հետեւեալ հասցեով՝ ТИФ-ЛИСЪ Редакция „Маск“:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՂԱՆԻՍԿՈՒԹԻՒՆ

Թիֆլիսաց Հայաստանի վիճակը: — Ներքին տեսութիւն: Նամակ Մոսկովայից, Նամակ Գորիսից, Ներքին լուրեր: — Արտաքին տեսութիւն: „Journal des Debats“ հայերի մասին, Հայոց խնդիրը Կոնստանդուպոլսի Հայաստանից լուրեր, Նամակ Գերմանիայից: Արտաքին լուրեր: — «Մշակ» հեռագիրներ: — Յայտարարութիւններ: — Տեղեկացոյց:

ԹԻՒՐԿԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

Չարմանայի չէ որ Թիւրքիայի հայերը վրդովված են անգլիացիների դէմ, նրանց խարդախ, նենգաւոր քաղաքականութեան պատճառով: Իրզրումի հայերի Անգլիայի դէմ վրդովված լինելը հաստատում են թէ ուղիւս «Голосъ» լրագրի հեռագիրները և թէ նոյն պէս մեր լրագրի Իրզրումի թղթ-թակցութիւնները:

Թիւրքիայի հայերը անգլիական թեան մէջ են, թէ ի՞նչ ապագայ է սպասում նրանց Անգլիայի բարեւար և մարդասէր հասկանալութեան տակ: Այժմ նրանք ամեն տեսակ անիրաւութիւն կարող են սպասել Անգլիայից, նրանք երկիւղով են նայում իրանց ապագայի վրա, պարզ տեսնելով որ լուսաւորված անգլիացիների ամենահաւատարիմ դաշնակիցները Փոքր-Վահայում լինելու են մօլեռանդ թիւրքերը, վայրենի և աւաղակ բուրգերը, չեղձները և լազերը:

Այդ պատճառով հաւանական է, ինչպէս մեզ հաղորդում են

մամսաւոր նամակներով, որ Իրզրումի հայերից շատերը դիտաւորութիւն ունեն, հէնց որ այնտեղից կը հեռանան ուսաց գորքերը, գաղթել դէպի Ռուսաստանից՝ նոր նուաճված Հայաստանի մասը, դէպի Վարսի սանջակ:

Ի հարկէ Իրզրումի բնակիչների համար, որոնք կը գաղթեն դէպի ուսաց հողերը, անձնական կեանքի ապահովութեան կէտից նայելով շատ լաւ կը լինէր ազատվել թիւրքաց անիշխանութենից և թիւրքերին բարեկամ Անգլիացիների մարդասէր բարերարութենից, — բայց երկրի համար, թիւրքաց Հայաստանի համար անդադար կորցնել իր բնական գուակներին, Հայաստանի համար կորցնել հայերին դա լաւ չէ, դա շատ վտանգաւոր բան է:

Քանի որ հայերը բազմաթիւ կը լինեն Հայաստանում, — Թիւրքիայի և Անգլիայի համար շատ դժուար կը լինի ոտնակոխ անել Հայաստանը: Հաւանական է որ նոյն իսկ անգլիացիները սրտով ցանկանում են որ հայերը գաղթեն թիւրքաց Հայաստանից դէպի ուսաց Հայաստանը: Ինչքան քիչ թւով կը լինեն հայերը իրանց հայրենիքում, այնքան թիւրքիայի համար հեշտ կը լինի ծննդ իր հպատակութեան տակ մնացած հայերին, այնքան Անգլիայի համար էլ հեշտ կը լինի իր ուղածին համեմատ, կամայա-

կան կերպով կառավարել Փոքր-Վահան:

Կարելի է իրանք անգլիացիները ամեն ջանքեր են գործ դրում, որպէս զի գրդեն Իրզրումի և միւս տեղերի հայերին թողնել իրանց հայրենիքը և գաղթել թիւրքաց Հայաստանի սահմաններից դուրս:

Բայց հայերը կրկին չը պէտք է խաբւեն: Նրանք պէտք է հասկանան որ հաստատ կերպով մնալով Անգլիայի հովանաւորութեան տակ ընկած երկրում, նրանք միշտ մի սպառնալի ոյժ կը կազմեն անգլիական կամայականութեան դէմ, — և Անգլիան ոչինչ չի կարողանայ անել նրանց դէմ: Անգլիայի համար ի հարկէ, աւելի շահաւէտ կը լինէր, որ բոլոր հայերը, Փոքր-Վահայի այդ միակ քաղաքակրթական ազգը, գաղթէին իրանց երկրից դուրս և որ ամբողջ երկրում մնային միայն թափառական, վայրենի ցեղերը, բայց և հայերը պէտք է համալսանայ որ նենգաւոր քաղաքակաւութիւնը և հաստատ մնալ իրանց տեղերի վրա, անկող հովանաւորների և բարերարների դէմ մրցելու, նրանց կորստաբեր պլանների առաջն առնելու, իրանց հայրենիքը պաշտպանելու նպատակով:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՍՏԱՅ ՍՈՒՐԻՍԵՅ

30 յուլիս

Երկաթուղու «կանակ» անունով երրորդ իշխանի մօտ կուր գետի աջ կողմում սկսվում է կառուցման աշխատանքը, որ տանում է դէպի Մուխրան գիւղը: Այդ ճանապարհի երկարութիւնը հազիւ կը լինի 8 վերստ, իշխանի մօտից նայելու ոչինչ չէ երևում բացի մացառներից և թփերով պատած լեռներից: Անցնելով երկու կամ երեք վերստաչանի ձեր առաջ բացվում է մի ընդարձակ դաշտ, շրջապատված բաւական բարձր լեռներով, որոնց հիւսիսային կողմում գտնվածները պատած են անտառներով: Բայց դուք տեսնում էք, որ նոյն իսկ դաշտի մէջ մասը պատած է աւելի խիտ և հասուն անտառով: Այդ Մուխրան գիւղէն շրջապատված իր այգիներով, Գաշտի արևելեան ծայրում հստակ է Վրացի վերստ, իսկ արևմտեան ծայրում կանաչ գետը, որոնք երկուսն էլ թափվում են Կուրը: Յայտնի է որ այդ ընդարձակ դաշտը իր շրջապատված անտառապատ լեռներով և գիւղերով պատկանում է Բագրա-

տրան — Մուխրանի իշխաններին, Գաշտի բնութիւնը տուած պտղաբեր է, հողը աւելի յարմարեցրած է երկրագործութեան իր բազմաթիւ առուակներով, որոնք անցնելով մէկ ծայրից միւս ծայրը շրջում են ամբողջ դաշտը: Չէ՞ք քոնի այդ ընդարձակ դաշտում մի կտոր հող բացի ճանապարհներից, որտեղից անցած շէնքերը, թանգարանը, Բայց իմ նպատակն է ծանօթութիւններ յայտնել «Մշակ» ընթերցողներին Մուխրան գիւղի մասին:

Մուխրանը մի ժամանակ եղել է կարաւանիայի (Վրաստանի) արժուանիտ մայրաքաղաքը, Այստեղ են թաղաւորել նոյնպէս երեք թագաւորներ: Միջին դարերում, որոնց միակ յիշատակներն են խաչքարված եկեղեցիները, ինչպէս Մուխրանի այգիներում, իսկ այժմ Մուխրանը մի գիւղ է, որ ունի եօթը հարիւր չափ բնակիչ, որոնցից 3/5 մասը հայեր են, իսկ 2/5 մասը վրացիք: Գիւղի կենտրոնում գտնվում են 3 եկեղեցիք երկու վրաց և մէկ հայոց հորայէն: Հայոց եկեղեցին աւելի մեծ է քան թէ վրաց: Այստեղ ժողովրդը գլխաւոր պարագայութեան է երկրագործութեանը և այգեգործութեանը՝ հաճախ է և դանդաղ, որովհետեւ երկրը չափազանց պտղաբեր է: Ինչպէս հայերը, նոյնպէս և վրացիք ստրուկներ են եղել, հայերը, յայտնի չէ թէ երբ, զնված են եղել Գարաբաղի հայահալած, Հայերին չէ կարելի դանախանել վրացիներից, թէ արտաքին ձևով, թէ սոցիոլոգիականով և թէ լեզուով, նրանք կատարեալ վրացիներ են: Նրանցից չէ՞ լսի ոչ մի հայերէն բառ: Միշտ անդամ հայ քահանայ տիրացուի հետ եկեղեցու մէջ խօսում է վրացերէն լեզուով: Այդ միակ հայ եկեղեցին է, որ կանգուն է իր գրդը իր դաւակներին: Այդ անպիսի գիւղում չէ՞ կայ ոչ մի ուսումնարան ոչ վրաց և ոչ էլ հայոց:

Տեղաւորեան մէջ ընկած գիւղացիները չեն կարողանում զգալ ուսումնարանի հարկաւորութիւն, իսկ կալուածատէր իշխանները անգամ չեն կամեում այդ կենսական հարկաւորութեան վրա Ուրեմն զարմանալի չէ, որ հայերը չեն կարողացել աշակաւանել իրանց մայրենի լեզուն, որովհետեւ նրանք չեն ունեցել միջակ այսօր ուսումնարան և նրանց մանուկները չեն լսում ոչ մի հայերէն բառ: Հայ քահանայի անելով, եկեղեցին ունի 2000 ռուբլ, որով նրանք կամեում են ինչի կենդեցում մեծ կաթիլ կէտէն: Հոգևոր իշխանութեան հրահրում են քայլ փորով կառուցանել եկեղեցու բակում մի երկու սենեակից բաղկացած ուսումնարան, որտեղ առժամանակ երեխաներին կը սովորեցնեն գիւղի քահանայը: Եկեղեցին արդէն ունի մի կաթիլիկէ արևմտեան ծայրում, որտեղ վրանտաւ են զանգաւորները: Ինչպէս վերը անուցի, այստեղ բոլոր հողերը պատկանում են կալուածատէր իշխաններին, բայց զարմանալի այն է, որ գիւղացին չունի ոչ մի սեփականութիւն: Կամ վարում է ցանում է, անկում է այդպէս կալուածատիրոջ հողի վրա, տնայով իր ստացած արդիւնաբերութեան 1/5 մասը կալուածատիրոջը, նա չի նստում է իր տունը նոյնպէս կալուածատիրոջ հողի վրա, և եթէ նա մեռնում է, չէ թողնելու իր ինչ արու դաւակ, նրա յիշած տունը և անկած այգին դառնում են սեփականութիւն ոչ թէ իր այրի կնոջ կամ եղբորը, այլ վարուածատիրոջ և նա բնակեցնում է այդ տան մէջ նորին, ում որ կամեում է: Բայց այդ գիւղացիք պարտաւոր են անվարձ մշակներ տալ կալուածատէր իշխաններին: Երբ որ նրանք մշակել հարկաւորութիւն ունեն օրինակի համար՝ հաճախ կը կան ժամանակ:

Չը նայելով այդ բոլոր ծանրութիւններին, մուխրացիները աւելի հարուստ են համեմատաբար այստեղի միւս գիւղերը բնակիչներից, որովհետեւ Մուխրանը ունի այգիներ, որոնցից զրկված են միւս լեռնային գիւղերը, որոնց արդիւնաբերութիւնը բաղկանում է ցորենից, գարունց, մասամբ եգիպտացորենից, և աւելի ոչինչ:

Կ. Տէր-Խաչատրեան

ՆԱԽԱԿ ԳՈՐԻՍԻՑ

15 յուլիսի 1878 ամի

Գորիս գիւղը որ բաղկանում է 350 տուն հայ գեղդաստանից, ընկած է մի ձորակի միջով անց-նող գետակի արեւելեան մասում սուր սուր ցըց-ված ժայռերի տակ: Այդ գիւղի բնակիչները պարագում են ընդհանրապէս հողագործութեամբ: այստեղ կլիման վատ է և տենդոտ: Արհեստա-գործութիւնը տակաւին չը կայ: Արհեստաւորը Շուշի քաղաքից է գալիս այստեղ, և իր ար-հեստը գործ դնում: Նոյնպէս վաճառականու-թիւնը թող է: Մի քանի խանութներ կան գի-նեկվաճառութեան, ծխախոտի և մանրավաճառու-թեան: Նրանց մէջ առևտուր անողների մեծա-գոյն մասը օտար տեղերից են, բացառու-թեամբ մի քանի չօղարների (տաւար գնողներ): Գետակի միւս արեւմտեան մասում մի տափարակ տեղում, ուր այժմ կառավարութեան հրամանով քաղաքատեղի է որոշված և փողոցների յատա-կագիծը քաշած նոր ձևով տներ են շինում, և ոմանք արդէն շինած են և բնակվում են նրանց մէջ: Այս տափարակ տեղում գետեղվում է պո-լիցիական գաւառական կառավարութիւնը և հաշ-տարար դատաւորի գիւմաստունը: Նրբ այցե-լուն մի հարեանցի հայեացք ձգէ այս գիւմաս-տների չորս կողմը կը տեսնէ գիւղական տանու-տէրեր և զանազան կարգի շատ անձինքներ խումբ խումբ ժողովված, որոնք կամ հրաւիրված են առանձին կարգադրութիւններ լսելու պօլի-ցիական և կամ բողոքներ ունեն ներկայացնելու: Գետակի է լինում և այս խաժամով ամբողջ մէջ ձեռքով ունեցող խօսող մի երիտասարդ, որ զանազանվում է նրանցից հազուադէպ միայն: երբեմն այս կողմը քաշելով սրան նրան և եր-բեմն այն կողմը, խրատներ և օրէնքներ է կար-գում նրանց գլխին և օրէնքի դռներ է սովորեց-նում: այս ամբողջ մէջ պտտող օրինական որ-սորդը ով է, եթէ ոչ, նոյն իսկ դատարանի գրա-գիրներէից մինը, որ իր օրէնսգիտական ազգու-ոյժը և զօրութիւնը ցոյց տալով ոմանց, մատնա-նիչ է լինում Սիբիր և տաժանակիր աշխատանք սպառնալով և զանազան պատժապարտութիւն-ներով, նա արդէն տիրում է օրինաւոր բողոքա-ւորին, մի խառնական լուծութիւնից յետոյ նա շփոթ-ված կցկտուր բառերով հաշտութիւն է խնդրում այս հողագաղտ օրինականի միջոցով: Էն դա էլ ինչնց այդ էր ուզում: «Այս չեմ կարաւ: չէ, չէ դա-կունը թող չի տալիս, ձեր տեղը Սիբիր է», իսկ ապաւորված անձը որ պատժելու արժանի է ար-դարանում է: առաջինները հաշտվում են առանց գիւմաստուն մտնելու և հեռանում են այն տեղից ահ ու զոռով: իսկ վերջինները առանձին են այցելութիւն անում այս երկրորդական դատա-ւորին:

1864 թւականից Բարձրագոյն հրամանով կար-գադրված է փոստայի ճանապարհ շինելու Շուշի քաղաքից մինչև Նախիջևանի սահմանագիւղը: այսքան տարվայ ընթացքում հազու անցեալ տարի վերջացաւ վաթսուս վերստ ճանապարհ Շուշուց մինչև Գորիս, ուր այդ ճանապարհի վրա շինել են երեք իջևաններ: Ժողովուրդը մեծ փողեր ծախեան ճանապարհի շինութեան վրա, բայց դարձեալ թերի մնաց:

Ժողովուրդի փառքը և պատիւը մի քանի աղա-նեղի պարսկական կեանքի մէջ է տեսնվում: Նրանք չեն սիրում ուսում և ուսումնաւորան: Թէ-պէտ քանի անգամ էլ կրկնվեցաւ աղգային լրա-գիրների միջոցով այդ հարցը, ճշայն բար-բառու յանապառի՝ դարձաւ, որովհետեւ ժողո-վուրդը անտարբեր է և անշարժ: Յունվար ամսի ցուրտ օրերից մինչ էր, երբ ես բազմ ունեցայ հանգիստեղ աշտարաններից մինի մէջ: զարմացայ, երբ տեսայ զբաղվողները գլխարկները ծածկած, փողպատը (չարժ) փաթկած, պալ-տօնները հագած, և իրանք նստած աթոռների վրա պարագում են: Թէպէտ այս մի անտուր ու նոր երևոյթ էր, սակայն համոզվեցայ, երբ տե-սայ, որ սաստիկ ցուրտ էր սենեակում: Փայտ չը կայ վառելու... Նրեակայեցէք, եթէ մի գի-ւմաստան մէջ այդ տեսակ դրութիւն է, ուր կը մնայ ողորմելի և անզարգացած ամբողջ:

Չանկեղծը, որ բաղկանում է տասը հազար տուն հայ և պարսիկ բնակիչներից, չունի գոնե մասնաւոր ուսումնաւորան, միայն այս տարի մի դատարանից բաղկացած դպրոց է բացվել ար-գունի հաշով Գորիս գիւղում, և մի վանական դպրոց Տաթևի վանքում: 1876 թվից: Թէ առա-ջինը և թէ վերջինը թէև այժմ իրանց մասնա-ւոր օգուտը ունեն, բայց ինչ արած, ասած է, որ «մի ծաղկով գարունը չի լինի», վստահանում եմ խնդրել իմ հայրենակից եղբայրներին որ

բաց աչքով տեսնէին իրանց օրդկերանց թշուառ ապագան, և հողային առաջն առնելու այն դո-րաւոր միջոցով, որ միակ ուսումն է և ուսում-նարանը: Եթէ չեն կարող ամեն մի գիւղում ու-սումնաւորան ունենալ, գոնե ընտրելին մի յարմար գիւղ և մի քանի գիւղի ժողովուրդ միանալին և կարգէին օրինաւոր հողաբարձու ուսումնա-րանը բարեկարգելու իրանց տուած տուրքերով և հանգանակներով: Կարծեմ հողեւոր իշխանու-թիւնը ես չի զլանայ ուխտառեղիների նուէրը չնորհելու այդ բարենպաստի գործի համար:

Գորիսեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Ինչպէս յայտնեցինք մեր լրագրում, ԹԻՖԼԻՍԻ Մետախ բերդի քաղաքական բաժնի կալանաւոր-վածները գիմեցին պրօկուրօրի միջնորդութեամբ բոլոր տեղական ամենօրեայ հրատարակութիւն-ներին, խնդրելով նուիրել նրանց համար գոնե մի մի օրինակ իւրաքանչիւր լրագրի: Մենք, մեր կողմից, վճռեցինք սկսած օգոստոսի 1-ից նուի-րել «Մշակի» երկու օրինակ կալանաւորվածների համար, իսկ այս տարվայ նիս համարներ իւրա-քանչիւրից մի մի օրինակ ուղարկել բերդը:

«Тифл. Вѣст.» լրագիրը ասում է, որ յու-լիսի 24-ից սկսած ԹԻՖԼԻՍԻ վերայի գերեզ-մանատան վրա էլ չեն թաղում նշնեցեալներին, որովհետեւ գերեզմանատունը քաղաքի վարչու-թեան կարգադրութեամբ կատարելապէս փակ-ված պիտի համարվի: Առ ժամանակ թաղում են Մախաթ սարի վրա, իսկ մշտական հանգստա-րանը լինելու է քաղաքից դուրս Նախիջևանից ցած:

«Крымск. Листокъ» լրագիրը հաղորդում է որ յայտնի հայ նկարիչ Յ. Ալվադովիկի դարձեալ իր մի քանի նկարներ ուղարկել է Փարիզի աշ-խարհահանդէսը և ինքն էլ շուտով գնալու է Փա-րիզ: Իր նոր ձիթանկարները Ալվադովիկի նկա-րել է իր սեփական կալուածքում Ղրիմի մէջ:

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ գրում են, որ այն-տեղ հաւաքվել է զարայիների մի խումբ, որ ման են գալիս թէ Ագուլիսում և թէ չլջակայ գիւղերում խաբում են կանանց, նրանց ապա-զան դուշակելով և նրանցից մեծ քանակու-թեամբ փողեր են առնում: Բացի ուղաւարտ-թիւններ անելը զարայիները զանազան գեղեր էլ են տալիս հրահանգներին Մեզ անհաւատալի է երևում, որ զարայիները այնքան ճարպիկ լի-նեն, որ կարողանան խաբել աղուկեցի կանանց, որոնց խելքի և ընդունակութեան մասին մի քանի անգամ մեզ գրել են:

Ներդրութիւն ենք խնդրում մեր ԹԻՖԼԻՍԻ բա-ժանորդներից, որ երէկվայ համարը նրանց ուշ հասցրինք: Այս գործը «Մշակ» տարածող չուա-վեցի թոմաս Կոնյորանցի պատճառով եղաւ, որ խօսք էր տուել խմբագրատանից դուրս գա-լուց—մի ամիս առաջ յայտնել: որպէս զի միջոց ունենանք նոր մարդ նշանակել նրա տեղ: իսկ նա առանց ասելու և պայմանը կատարելու նը-շանակած ժամանակին չեկաւ ապարան համար-ները տարածելու: Գեռ մի ամիս սրանից առաջ խմբագրատանից դուրս արեւք մի ուրիշ տա-րածող, Սահակ Գովհանիսեանին: Այս վերջինը տուել էր բաժանորդներին կեղծ ապահովագիր-ներ, պուդրերով ծախել էր «Մշակի» և «Մեղու-Հայաստանի» համարները և այլն այսպիսի ազ-նիւ գործեր էր կատարել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«JOURNAL DES DÉBATS» ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Ի Փարիզ հրատարակալ «Journal des Débats» անուն լրագիրը հեռեւեալ Բերլինի թղթակցութիւնն կը հրատարակէ իր յու-նիս ամսոյ թերթին մէջ:

Օրվ վերջին նամակներու մէջ ծանուցած եմ ձեզ Բուսմաիոյ և Գարատաղի խնդր-ները: Այս երկու իշխանութեանց ներկայա-ցուցիչներուն հետ ունեցած երկար տեսակ-ցութեամբս, իրենց նպատակին և խնդրոց օրինաւորութեան վերահասու եղայ:

Արդ, թող տուէք ինձ այսօր ալ խօսիմ, այնպիսի ազգի մը վրա, զոր դարաւոր կա-պիր Գաղղիայի հետ միացուցած են, որուն վերջին թաղաւորը՝ Լուսինեան, Սէն—Տընիի արքունական դամբարանին մէջ կը հանգչի:

Միտքս Հայաստանի վրա խօսիլ է, որուն կողմէն տէրութեանց խորհրդոյ առջև նախ-կին պատրիարք Մկրտիչ արքեպիսկոպոս Խրի-մեան, Խորէն արքեպիսկոպոս Նար. Պէյ, Պ. Ս. Բաբաղեան, և ասոնց բարաւոյգար Մինաս Ձէրազ իրբե ներկայացուցիչ զրկուած են:

Արեւելեան և ոչ մէկ ժողովուրդ չունի այնչափ բարձր աստիճան համակրութեան և բարոյական օգնութեան կարօտութիւն որ-քան Հայ ժողովուրդը, ոչ միայն Գաղղիոյ՝ այլ և ամբողջ արեւմտեան տէրութեանց քով: Հայաստան թէև շրջապատաւ վայրենի և բարբարոս ցեղերէ, բիւրսերէ, թիւրք-մէններէ, Լազերէ, Ձերկէններէ, այսօր ամե-նայեւ անարատ պահած է շատ դարերէ ի վեր իւր քաղաքակրթութեան գանձը, իւր կրօնը, իւր բարոյականութիւնը և լեզուն, որոնք Խաչակրաց բեկորներուն նման առիա-կան բարբարոսութեան կատաղի կոհակնե-լուն վրա կը շարժին: Խաչին և գաղղիա-կան գաղափարաց պահպանութեան ներքեւ, այն ժողովուրդը, որ նշանակութեան ար-ժանի է իւր գեղադրութիւններով և անցե-լոյն աւանդութեանց մէջ ունեցած անփոփո-խելի հաւատարմութեամբը, պէտք է ստու-գիւ որ Ներսիս վայրկեան մը մոռնայ իւր նախնաձութիւնները և ներքին վէճերը, որ-պէս զն հայոց լաւագոյն վիճակ մի տնօրինէ: Անի նա դարոյններ, ուր գաղղիներէն լեզուն ուսումը հայերէնի և տաճիկերէնի չափ պար-տաւորիչ է. ունի գրագէտներ, որոնք գաղ-ղական գրականութեան զլխաւոր մասերը այսինքն Կորնէյլէն և Բասկինէն սկսեալ մինչև Վիկտոր—Հիւկօ կը թարգմանեն: Անին մա-տենադարաններ, ուր կը գտնուին պատմու-թեան, արհեստից, և ուսումնական գիւտե-լու վերաբերեալ եւրոպական հրատարակու-թիւնները:

Մէկ խօսքով՝ Հայաստանը բարոյական ուղղութիւն մ'է բարբարոսութեան անապատին մէջ տեղ և գրեթէ եւրոպական գաղթականու-թիւնը կը համարի այն, որ հաստատուն մնացած է ընդդէմ այն ամեն ձգանց, որը ի գործ դրուած են զինքը յեղաշրջելու և իւր փառաւոր անցիւնը դէմ անհաւատարմ ըն-ծայելու:

Անբաւով մը աւել մեծ կարեւորութիւն տալու համար իրեն համակրութեանցը, իւր ներկայացուցիչներէն մին այնպիսի անձ մը ընտրած է, որ միանգամայն եկեղեցական և նշանաւոր բանաստեղծ է. այն է զեր. Խո-րէն արքեպիսկոպոս Նար.—Պէյը, որ անշուշտ ընտիր ճաշակով թարգմանած է Լամարթինի Գաշնակները և Խորհրդաւորութիւն-ները (°):

«Իտաղութեան արժանի է, որ օրինակի համար, Գարատաղի ժողովուրդեան պէս ան-նշան ժողովուրդ մը չէ հայը: Հայք 4 մի-լիոնէն աւելի են, որոց մէկ միլիոնը Ռու-սաստանի մէջ է, և մեծաքոյն մասը Փուր-քիոյ իշխանութեան տակ: Ժողովուրդեան այս երկու մասանց մէջ սա տարբերութիւնը կայ որ, ուսաստանք իրենց բաղձացած նիւթա-կան ամեն կերպ հանգստութիւնը կամ բա-րիքը կը վայելն: մինչդեռ ճաճկաստանի հայք ամեն բարոյական և իմացական ազա-տութիւնները կը վայելն, սակայն նիւթա-կան մասին գալով՝ խիտ գեղադր և թշուառ են և ամենազգի զգիւնաց և հարստահա-րութեանց տակ կը հիմեն: Գաղղիական կալ-սերութեան օրով վայրկեան մը կը յուսա-ցուէր թէ, իրերը կերպարանափոխ պիտի լլլան: Նապօլէոն Գ. յիշելով անցիւնը աւան-գութիւնները ի նպատակ Հայաստանի բաւա-կան հողածութիւն ցոյց տուած էր Բ. Կրան

մոս: Նապօլէոն իշխանն ալ նոյն բարի զգացմունքներով տողորուած, զորս «Revue des deux Mondes»-ի մէջ հրատարակած էր. և որոնք ի վնաս դարձան իւր անձին, դժբաղ-բաբար ի նպատակ կաթողիկ հայոց և եթ կը հոգածէր, որոնք 60,000 հոգի միայն կը հաշուէին. ուստի միմիայն անոնց համար խիստ դժուար էր ազատութիւններ ստանալ, թող-լով միւս քրիստոնեաները: Այս նպատակաւ վճռուելիք բոլոր վերանորոգութիւնները հար-կաւ չը պիտի գործարդուէին, այլ Բ. Կուռը իւր սովորական նրբամտութեամբ երբէք կատարելու համար չերազած խոստումներն ընելով, այս կացութիւնն օգուտ քաղեց:

Այսօր հայերը կը յուսան որ հրատարակ-պետական Գաղղեան, զերծ կայսերութեան օրով տիրող ազդեցութիւններէ, առանց կար-ծեաց և հաւատոյ խտրութեան բոլոր քրիս-տոնէից վրա իւր ուշադրութիւնը պիտի դար-ձնէ, և անկեղծօրէն պիտի ջանայ անոնց խղ-ճալի կացութիւնը բարւոյելը: Հայոց պատգա-մաւորները արդէն Պ. Վատրիկ(թերին և Սէն-Վալէն կոմսին համակրութեանը և տեսած լաւ ընդունակութեան վրա պարծենալով՝ հրա-պարակա իրենց խորին շնորհակալութիւնը կը յայտնեն: Յիշեալ գաղղեական երկու երես-փոխանները որք իրենց անձնական փորձա-ռութեամբ զրկեւելքը ճանաչալու անհուն ա-ռաւելութիւնն ունին, գաղ. ազգին քարա-քարկիւղ և անշահագէտ դերը խիստ լաւ կերպով կը հասկնան, անշուշտ պիտի յիշեն որ Հայաստան մասնաւոր իրաւունքներ ունի իւր երկրին պաշտպանութեան վրայ:

«Հայոց պատգամաւորներն, Անդրեյ մէջ, ուր երկու ամիս մնացին, ընդհակառակն ան-տարբեր քաղաքավարութիւն միայն գտան: Այժմ բոլորովին համոզուած են թէ Գաղղիոյ պաշտպանութիւնը աւելի զօրութիւն կամ օգ-տակար կրնայ ըլլալ իրենց: Կը յուսանք որ անոր պաշտպանութիւնը բաւական պիտի ըլլայ իրենց խնդրած բարեկարգութիւնները աւելցնելու: Իսկ իրենց անհաւատարմ իրաւունք կան պահանջելու:

«Ստոյգ է որ Փուրքիայէն գալուիլ չեն ու-գեր, ոչ ալ մոսմաւոր կառավարութիւն կաղ-մել, այլ ընդհակառակն, Իսլամական թոյլ-տուութեան տակը բարոյական ազատու-թեանց վրա գոհ, կը փափազին ինչպէս որ են՝ նոյնը մնալ: սակայն կը խնդրեն ազա-հովի ընդդէմ այն գաղանակն բռնաբարու-թեանց՝ որոց զոհուած են այսքան երկար ժամանակէ ի վեր:

«Երաւամբ, կրտսն, թէ Հայաստան տաճկա-կան լուծը այնպիսի սոսկալի կերպով կրած է, որոյ վրա Ներսիս չը կրնար գաղափար մը ունենալ: Ընդհանուր ուշադրութիւնը Պուլղարաց վրա դարձաւ, որոնք աւելի աչաց տակ էին և կրած տառապանքին բնականա-բար աւելի արձագանք կը գտնէր մերձակայ երկիրներու մէջ. սակայն Պուլղարը հայոց չափ չը տառապեցան: Պուլղարիա Ներսիսի աչաց տակ է, տաճիկ պաշտօնեայք յիշեալ երկրին մէջ եւրոպական հիւպատոսներու անմիջական հսկողութեանց ներքեւ են, որք հակառակ Բ. Կրան առակ դարձած թմրութեան՝ կրնան ժամանակ ժամանակ ամբողջներ ձեռք ձգել ի նպատակ հպատակ ժողովուրդոց: Բայց ասով հանդերձ Փոքր-Ասիոյ հեռաւոր գաւառնե-րուն մէջ, ամեն պաշտպանութենէ զուրկ, տաճկական վարչութիւնները՝ իրենց ամեն ուղածներն կատարելը ներքեւ կը կարծեն: Ասէ սա կը հեռեւի որ, երկիրը կրկին և երբեմն երեքիկն տուրք կը վճարէ, և այս տուրքը զոր տէրութեան կողմէ հաւաքելներուն կը վճարեն, համեմատաբար աննշան բան է: ճաճկաստանի մէջ կանոնաւոր կերպով եղած ուղղակի կամ անուղղակի հարկերը՝ ստոյգ է որ նշանաւոր բան մը չեն. բայց երբ մէկ կողմանէ նկատողութեան առնեմք թէ Կ. Պուլ-

սէն զընկած կառավարիչները՝ այս երկրին մէջ հարստութիւն դիզելու համար կ'երթան, հարկ կը վճարեն ասոնց հաշուէ դուրս տուրք մը վճարել սովորական տուրքէն աւելի նշանաւոր: Նաեւ վանայ գաւառին մէջ շատ տեղեր ուր քիւրտք կը բնակին, ասոնք ալ իրենց համար յատուկ տուրք մը ունին զոր քրիստոնէիցէն կը հաւաքեն: Ասոնց դէմ տաճկի կառավարութիւնը կարող չէ պաշտպանել զերեւել և հոգն անգամ չէ, թէ և հոգն ընէ՝ արդիւնք մի և նոյն է: Այսպէս ամեն կողմէ ճշնունքով, նիւթապէս խօսինք՝ բառին բուն նշանակութեամբ, երկիրը հալ և մաշ եղած է:

«Այսպիսի իրաց վեճակ մը կարելի չէր երկարաձգուիլ: Հայք կը խնդրեն որ Ներսիս իրենց շահերը ձեռք առնու և վերջնական կերպիւր սոյն վեճակը կարգադրէ: Ասոնք, ինչպէս որ քիչ մը վերք ըսինք, Փարսիոյ հպատակ մնալ կ'ուզեն, որ իւր անհոգութեամբը կամ թոյլութեամբը ոչ նուազ բարոյական ազատութիւն չորհարձէ իրենց: Միայն կը փափաքեն որ քրիստոնէայ ըլլայ իրենց կառավարիչը, Բ. Դրան կողմանէ անուանի, բայց ընտրութիւնը եւրոպական տէրութեանց կողմէն ալ վաւերանայ, և կարելի եղածին չափ անփութիւն մնայ: Այս կառավարիչը պիտի նստի Հայաստանի արդի մայրաքաղաքը եղող Երզրումի կամ ուրիշ քաղաքի մը մէջ: Նորա ձեռքը պէտք է ըլլայ ոստիկանութեան տնօրէնութիւնը, որպէս զի երկրին խաղաղութիւնը պահպանել և երկրին մէջ մնալք տրոց մէկ մասին վրա հասնի, որ ի հարկին հասարակաց կրթութեան և ճանապարհաց շինութեան համար պիտի գործածուին:

«Մինչև ցայսօր, իրաւ է, որ Հայք արոց չափազանց ծանրութեան տակ ընկած, դարձեալ իրենց ծախիւքը ստիպուած էին ճանապարհները շինել, նորոգել և հաղորդակցութեան ուրիշ միջոցներու հոգը կրել: Կենտրոնական վարչութիւնը յայտ մասին օգուտ մը չունէր անոնց և ոչ վարդիպետութեան ծախսը նկատմամբ:

«Իրենց առևտուրը ծաղկեցնելու և աւելի ընդարձակելու համար կը խնդրեն որ կարելի ըլլայ իրենց Սև ծովու վրա Բիզէ ըսուած նաւահանգիստը գործածել, որ Բաթումի և Տրապիզոնի մէջտեղ կը ընի:

«Ասոնք են անտարակցայ, այն օգուտները զոր ամեն կրօնական հասարակութիւնը կուտան և մի և նոյն աստիճանաւ վայելելու: Արդ, Հայաստանի քրիստոնէայ ժողովուրդն ոչ թէ միայն իսլամաց վրա 800,000 բնակչօք առաւելութիւն մի ունի, այլև քաղաքակրթութեան մէջ ըրած յառաջագիւծութեան աստիճանով մեծապէս ներող ըրած է զինքը ի մասին կրօնի ազատութեան, և հայկական դասնութիւնը արեւելից մէջ ամենէն աւելի տարածեալն է, և ասոր խօսք չը կայ: Ներկայումս զպահները, հապէ՜ք, ասորոց մէկ մասը Հայոց դասնութեան կը պատկանին: Ուրիշն քնակաւ կ'երեւի որ գաւառին վարչութիւնը այսուհետև իրենց յանձնուի:

«Վերջապէս, ինչպէս կը տեսնուի, Հայոց խնդիրները թէ՛ չափաւոր են կերպով և թէ՛ իրաւանց և սկզբան մը վրա հիմնուած: Դիտեն՝ այնպէս ըլլալ իրենց գիտակցութեամբը: Նի՞ք Ներսիս բան մը ընելու չըլլայ իրենց, պիտի ստիպուին խնդրել որ իրենց երկիրը Ռուսիոյ հետ միանայ: Բայց անհասկալի տարրեր իրենց խնդիրները ընդունելութիւն պիտի գտնեն հոս: Լամարթին օր մը այսպէս կը գրէր Պորէն եպիսկոպոսին. «Արեւելեան բոլոր ժողովուրդը մէջ Հայաստանը իւր կրթութեամբը, իւր մշակութեան վեճակով և զինքը նշանաւոր ընող բոլոր յատկութիւններով բարի յոյսեր տուող ժողովուրդն է»:

(Արշալոյս Արարատեան)

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐԸ ԿՕՆԴԻՍՏԱՆՈՒՄ

Իւրիշի կոնգրէսի պրոտոկոլները հրատարակուած են հետզհետէ: Մենք նրանցից քաղելով կը հաղորդենք մեր ընթերցողներին ինչ որ խօսվել է հայոց խնդրի վերաբերութեամբ կոնգրէսի մի քանի նստումում: Յուլիսի 4-ի նստում հաստատման արարից շատերը խնդրել են նոյն օր չը վեճարկել յունական խնդրի վրա, որ գտնվում էր օրակարգում: Այդ ժամանակ լուրջ Մալաթիայի առաջարկում է պարսպել Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ յօդուածով որ վերաբերվում է Հայաստանին: Ասել է թէ ինքն պատրաստ է ընդունել այդ յօդուածի վերջին երեք տողերը, որոնք վերաբերվում են Հայերին բարեկարգութիւններ և վերանորոգութիւններ շնորհելու, եթէ կոնգրէսը որոշէ ջնջել առաջին երեք տողերը, որոնցից երեւում է, թէ ուսաց զօրքերի նոյն նահանգների մարքիւր կանխում ունի Բ. Դրան այդ վերանորոգութիւնները շնորհելուց: Հակառակ դէպքում, լուրջ Մալաթիայի կառավարիչ նրանից յետոյ մի մասնաւոր յօդուած աւելացնել հայերի վերաբերութեամբ: Կոմս Նուվարով առանց պնդելու մի այնպիսի վեճարկութեան վրա, որին ինքն բոլորովին պատրաստված չէր այդ օր, այնու ամենայնիւ վախենում է որ եթէ ուսաց զօրքերը մարքին այդ նահանգները առաջ քան թէ խոստացված բարեկարգութիւնների հաստատվելը, դրանից ծանր անկարգութիւններ կը ծագեն: Բացի այս, խնդրում է այդ մասին որ և ինչ նկատողութիւն յետագայ մինչև այն րօպէին որ կոնգրէսը կատարելապէս կը զբաղվի հայոց խնդրով:

ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԼՈՒՐԵՐ

Ս. Պետերբուրգից յուլիսի 17-ին «Indépendance Belge» լրագրին գրված մի նամակից քաղում ենք հետևեալները: «Հէնց որ թիւրքերը մեզ կը յանձնեն Բաթում, ուսաց զօրքերը կը թողնեն Երզրում և բոլոր Հայաստանը խելոյն կը մաքրվի: Այնու ամենայնիւ, այդ նահանգի քրիստոնէայ ընակիչները վախենում են ուսաց զօրքերի հեռանալուց, որոնք պաշտպանում են նրանց քուրդերի և լազերի դէմ: Այդ վերջինները շատ քիչ արժանի են այն համակրութիւններին որ պ. Լայպպը ցոյց է տալիս նրանց: Դրանք զարշնել աւազակներ են ծովը և ցամաքի վրա: Դեռ նորերումս, նրանցից մի խումբ յարձակվել է սահմանակից մի ուսաց գիւղի վրա և յափշտակել է տաս և մէկ օրիորդներին, որոնք շուտով ծախվել են Վիբիայի հարկմանը: Լազ ծովապատակները արգելք են ըլնում վաճառականութեան Բաթումի և Տրապիզոնի մէջ: Անկարելի չէ որ Բաթումի նահանգիստը այդ ծովապատակների կողմից յարձակումների ենթարկվի: Դժուար թէ ուսաց կառավարութիւնը որոշէ քանդել այնտեղ գտնված ամրութիւնները: Ռուսաց մամուլը, քիչ բացառութեամբ, շարունակում է իրան անբաւական ցոյց տալ կոնգրէսի հետևանքներից: Նա գանգատվում է թէ ազգու միջոցներ չեն որոշված թիւրքերին ստիպելու համար որ անմիջապէս գործարկեն իրանց վրա գրված պարտաւորութիւնները: Կոնգրէսը պարտաւոր էր, ամեն բանից առաջ, այնպիսի սահմանադրութիւններ տալ Բաթումի, Երզրում և Բաթումիներին և Հայաստանին որ այդ նահանգների ինքնավարութիւնը ապահովվէր: Այդ լրագրիները մտաւում են որ չէ կարելի անապարկով տալ այդպիսի օրէնքներ, պէտք է որ այդ օրէնքները մասնաւոր խնամքով մշակվեն կօմիտէներից, որոնք շուտով կ'ընտրվեն մեծ տէրութիւններից: Ռուսաց մամուլը տեսնում է մեծ դժուարութիւններ Անգլիայի յանձնա-

նու եղած աշխատութեան մէջ և կատարելապէս իրաւացի է համարում Անգլիայի ազատական կուսակցութեան մէջ երևեցած յուզմունքը: Երզրումից գրում են որ յուլիսի 17/29-ին մեծ հանդէս է կատարվել այդ քաղաքում և Գրիգորեան-Հայերը ճաշկերպի են տվել զենեալ Լազերի: Դեռ Երզրումից, ալեկալ օր պէտք է հեռանար Երզրումից: Հայոց ամենայնայնիւ գերդաստաններից երիտասարդներ ցանկացան սպասաւորել սեղանին: Ողևորութիւնը շատ մեծ է եղել: Հունձերը այս տարի շատ առատ են երևում: Երզրումի նահանգում և ամեն կերպով հանգստութիւնը տիրում է ուսաց աղմկիստ: Բայց շնորհում Բայց այդ շնորհից դուրս կողպատութիւնները շարունակվում են: Գեներալ-մայոր Իվանով Լարսի հրամանատար անուամբ չէ, Երզրումի հրամանատարն է գնդապետ Կազէկ: Երզրումի մօտ հաւաքված բոլոր զօրքերի հրամանատարութիւնը կը յանձնվի զենեալ Նէրէմէիէվին, իշխան Զավալաձէի հեռանալուց յետոյ»:

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Իերլին, 3 օգոստ. 1878

Մի քանի օր առաջ (յուլիսի 30-ին) նոր ընտրութիւններ կային Բայխտագի համար: Ձեր ընթերցողներին յայտնի է որ Բայխտագը, որ պիտի շարունակէր էլի երեք տարի իր գործունէութիւնը, կառավարութեան հրամանով լուծվեցաւ, երբ Նօբելից փորձեց կայսրի կնաքի դէմ իր եղեռնական փորձը: Ինչպէս յայտնի է, Բայխտագը ձայների բազմութեամբ մերժեց ընդունել կառավարութիւնից առաջարկած բացառական օրէնքը, որի առիթ եղաւ Հէօգէլի փորձը: Այսպիսի պայմանների տակ անկասկած պատկու էր, որ բոլոր կուսակցութիւններն էլ իրանց բոլոր ոյժը պիտի գործ դնէին աւելի բազմաթիւ ներկայացրած ինչեւ նոր ընտրութիւնների ժամանակ:

Պահանջողականները յուսով էին, որ բազմութիւնը նրանց կողմը կը ըլնի և կօշնէ նրանց վերջապէս մեծամասնութիւն կազմել Բայխտագի մէջ և յաղթել նացիօնալ-լիբերալ (ազգային ազատական) և Ֆօրտշիտ (առաջադէմ) կուսակցութիւնները, որոնք իր կարծիքով գրեթէ նոյն են ինչպէս և սօցիալ-դէմոկրատները:

Նացիօնալ-լիբերալները և առաջադէմները, գոնէ Իերլինի մէջ, միացան մի կողմից պահանջողականների դէմ, վախենալով մի սաստիկ յետադիմութեան, միւս կողմից ընդդէմ սօցիալ-դէմոկրատների, որոնք և նրանց համար նոյնքան զգուշ են, ինչպէս և պահանջողականների համար: Վերջապէս կղերականներն էլ, օգուտ քաղելով սօցիալ դէմոկրատների դէմ եղած ձգտումից, քարոզում էին, որ միայն կոնգրէս և եկեղեցուց հեռանալով ժողովուրդը կարող է հասնել այնպիսի կողպատութեան, որի ապացոյց էին երկու սարսափելի եղեռնագործութիւնները ընդդէմ կայսրի, Պ. պ. կղերականները ի հարկէ չէին մոռացել, բայց ծածկում էին դիտմամբ այն իրողութիւնները, երբ իրանք էին եղեռնագործներ ընդդէմ նոյն միապետական սկզբունքի... Բայց դա մի և նոյն է, յուզմունքների ժամանակ ամեն միջոցներն են գործ դնում և ընտրութիւնների հետևանքները ցոյց տալին, որ կղերականները աջող միջոց գործ դրին: Մինչև այժմ ընտրութեան ծանօթ հետևանքներից յայտնի է, որ կղերականները աւելի պատգամաւորներ ունեն, քան թէ այլ մի օր և է կուսակցութիւն: Նրանցից ընտրվեցան 91 պատգամաւոր, մինչ որ մնացած կուսակցութիւններից ամենամեծը, նացիօնալ-լիբերալները, միայն 82 ներկայացուցիչներ ունեն առժամանակ: Գեռ ևս 61 ընտրութիւններ անորոշ են և նորից պիտի կատարվեն: Իսկ մի կողմից կարելի է հետևանքներ մատնել չը զարմանալ՝ սօցիալ-դէմոկրատները որոնք անցեալ Բայխտագում 14 անգամ ունէին, որոնցից 3 Իերլինի պատգամաւոր էին, այժմ ընդամենն երկու ներկայացուցիչ ունեն և զոցանից ոչ մէկը Իերլինի մէջ ընտրված չէ: Բայց չը նայելով որ սօցիալ-դէմոկրատները յաղթված են, ուշադրութեան արժանի է այն իրողութիւնը, որ նրանք միայն Իերլինի մէջ 20,000 քուէ աւելի գցեցին, քան թէ անցեալ անգամ:

Սեպտեմբերի սկզբին Բայխտագը պիտի ժողովի: Ինչ կը ըլնի առաջին նստերի հետեանքը, որոնց մէջ կառավարութիւնը կրկին պիտի ներկայացնէ սօցիալ-դէմոկրատների դէմ բացառական օրէնքը... Կարծեմ քանի օր կայ Գերմանիայի մէջ ներկայացական (representatif) կառավարութիւնը, երբեք դեռ եղած չէ այնպիսի անորոշ դրութիւն, թէ կուսակցութիւնների իրար մէջ, թէ կառավարութեան և ժողովրդի ներկայացուցիչների մէջ, Գրիգորի շատ լարված է:

Ա. Արծրունի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Գերմանական լրագրիները հաղորդում են, որ խորէն Նարբէյ եպիսկոպոսը աշխատում է ապացուցանել, որ ինքն ուղղակի գծով ծագում է Լուսինեանների տոհմից, որոնք, ինչպէս յայտնի է մի ժամանակ տիրում էին Լիպրոն կղզին: Ասում են որ խորէնի Լուսինեաններից անմիջապէս ծագելը ճանաչված է այդ ընտանիքի ժառանգների միւս ճիւղերից:

— «Times» լրագիրը լսել է, որ փոքր-Ասիայի համար Անգլիայից առաջարկված վերանորոգութիւնների պրօէկտը շատ լաւ ընդունվեցաւ: Բ. Դրան կողմից, Լրագիրը կարծում է որ Անգլիայի խորհրդները և թիւրքիայի վրա նրա յանձն առած վերահսկողութիւնը վերածնող ազդեցութիւն կունենան թիւրքաց պետութեան վրա:

— «National Zeitg.» լրագիրը հաղորդում է որ Կ. Պօլսում կազմելու է մի անգլիական մշտական յանձնաժողով, որի պաշտօնը պէտք է ըլնի առաջնորդել թիւրքիայի մէջ կատարելու վարչական վերանորոգութիւնները և հսկել նրանց ճշգրտութեամբ իրագործելու մասին: Յանձնաժողովի նախագահ նշանակված է Կարլ Դուէֆերին, Կանադայի նախկին նահանգապետը, որ նոյնպէս մի ժամանակ յայտնվեցաւ իր պատգանակաւ գործունէութեամբ Սիրիայում:

— «Nation. Zeitg.» լրագիրը հաղորդում է որ Կանադայի նահանգապետ նշանակված է անգլիական թագուհու ազգական մարկիզ օֆ Լորն:

— Մայրաքաղաքի լրագրիներին հեռագրում են յուլիսի 26-ին (օգոստոսի 7-ին), որ համայնքների ժողովը նստում Թգօրման մի շատ ցաւալի անցքի պատճառ դարձաւ: Նա շատ անգամ ընդմիջում էր զինուորական միւնիստրի ճառը որի պատճառով կարգի հրաւիրվեցաւ, բայց չը կամեցաւ հնազանդվել: Նորից թէ առաջարկութիւն ներկայացրեց, որ Օգօրման անհանգստութեան և անկարգ վարմունքի համար հեռանայ նախ դա՛լիսից: Երկար վիճաբանութիւններից յետոյ այս առաջարկութիւնը ընդունվեցաւ:

— «Presse» լրագրին Աթէնքից գրում են, որ յունաց միւնիստր Գէլիանին օրը փարիզ է գտնվում և դիտաւորութիւն ունէր այդտեղից վիճենա անցնել, ուղղակի Պետերբուրգ ուղևորվեցաւ այդտեղից առանձին հրաւերք ստանալու պատճառով:

— «Times» լրագրին Բէլգրադից հաղորդում են, որ այստեղ գտնվող նահանգապետները և հիւպատոսները անգաղաք թղթեր են ստանում Հին-Սերբիայի գանազան մասերում քնակվող բնակիչներից, որոնց մէջ նրանք խնդրում են, իրանց միացնել իշխանութեան և ոչ թէ Բօլգարիայի հետ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՕՆԴՈՆ, 3/15 օգոստոսի: Համայնքների ժողովը նստում Բօրի պատասխանելով Գիլի հարցմունքին, ասեց որ տէրութեանը ոչնչ յայտնի չէ ուսանելի Ամուլ-Մարիա դեմի վրայով անցնելու և Միջին Ասիայում նրանց հաստատվելու մասին Ռուսաց միւսիս (չեսպոնութիւնը) թէ և հասաւ Կարուլ բայց Ռուսաստանի յարաբերութիւնը դէպի էմիրը յայտնի չէ: Անգլիական չեսպոնութիւնը նոյնպէս ուղարկված է դէպի Կարուլ: Նորից յայտնեց որ դեռ ևս ճիշդ տեղեկութիւններ չունի ուսանելի գործողութիւնների վրա Միջին Ասիայում: Անգլիան պէտք է իր չեսպոնութիւնը Կարուլ մէջ ընդգրկողը և ուսաց չեսպոնութեանը:

